

111. *Mignan (Robert)* — A Winter journey to Koordistan, 2. vol. London, 1839.
112. *Millingen (Major Frederick)* — Wild life among the Koords. London, 1870.
113. *Moltke* — Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839. Berlin, 1841.
114. *Morery (Louis)* — Relations nouvelles du Levant. Lion, 1671.
115. *Morier (James)* — A Second Journey through Persia, Armenia and Asia Minor. London, 1818.
116. *Moynet* — Voyage au littoral de la Mer Caspienne, 1858, octob. (Tour du Monde).
117. *Ohsson (M. C. D')* — Des peuples du Caucase et des pays au nord de la Mer Noire et de la Mer Caspienne dans le X siècle: Voyage d'Abou-el-Cassim. Paris, 1828.
118. *Olivier (G. A.)* — Viaggio nella Persia. Milano, 1816.
119. *Ouseley (Will.)* — Travels in Persia, etc. 3 vol. London, 1819.
120. *Parrot (Freidrich)* — Reise zum Ararat. Berlin, 1834.
121. *Petermann (H.)* — Reisen im Orient. Leipzig, 1860-1.
122. *Philippe (Rev. P.)* — Voyage d'Orient. Lion, 1669.
123. *Poullet* — Nouvelles Relations du Levant, 2 vol. Paris, 1668.
124. *Rauwolf* — Beschreibung der Reyss Armenian, etc. Augsburg, 1583.
125. *Sachau (Edu.)* — Ueber die Lage von Tigranokerta. Berlin, 1881.
126. *Sandreczki (C. D.)* — Reise von Smyrna bis Mosul, 2 vol. Stuttgart, 1857.
127. *Sandwith Humptry* — A Narrative of the siege of Kars. London, 1856.
128. *Sanson* — Voyage ou Relation de l'Etat présent du royaume de Perse. Paris, 1695.
129. *Schilberger (Johann)* — Reisen in Europa, Asia und Afrika. München, 1859.
130. *Schläfli (Alex.)* — Reisen in den Orient. Winterthur, 1864.
131. *Schulz (Ed.)* — Mémoire sur le Lac de Van et ses environs. (Journal Asiatic, 1840).
132. *Smith and Dwight* — Missionary Researches in Armenia. London, 1834.

133. *Southgate (Horat.)* — Narrative of a tour through Armenia, Kurdistan, etc. London, 1840
134. *Struys (Jean)* — Les voyages en Moscovie, en Tartarie, en Perse, aux Indes, etc. 3 vol. Lyon, 1682.
135. *Tavernier (J. B.)* — Les six Voyages en Turquie, en Perse, et aux Indes, etc. 3 vol. Paris, 1676.
136. *Tchihatcheff (P.)* — Lettres sur la Turquie. Bruxelles et Leipzig.
137. — Description de l'Asie Mineure, 4 vol. avec deux Atlas. Paris, 1853.
138. — L'Arménie et la Perse. Texte et gravures, 2 vol. Paris, 1842.
139. — Description de l'Arménie et la Perse, etc. Paris, 1842.
140. *Thevet (F. André)* — Cosmographie de Levant. Anvers, 1556.
141. *Tournesfort (Piton de)* — Relation d'un voyage du Levant, 3 vol. Lion, 1717.
142. *Vereschaguine (Basile)* — Voyage dans les provinces du Caucase, 1864-5. (Tour du Monde).
143. *Villotte (P. J.)* — Voyage d'un Missionnaire de la Comp. de Jésus en Turquie, en Perse, en Arménie, en Arabie et en Barbarie. Paris, 1730.
144. *Vivien (de Saint Martin)* — Etude de Géographie ancienne et d'Etnographie asiatique, 2 vol. Paris, 1850.
145. — Un chapitre de Géographie Orientale. (Annales des voyages. Janvier) 1867.
146. *Wagner (Moritz)* — Reise nach Kolchis und nach den Deutschen Colonien jenseits des Kaukasus. Leipzig, 1850.
147. — Reise nach Persien und dem Lande der Kurden, 2 vol. Leipzig, 1852.
148. — Reise nach dem Ararat und dem Hochland Armenien. Stuttgart, 1848.
149. *Warrington (W. Smith)* — Geological features of the country round the Mines of the Taurus in the Pashalic of Diarbekr, etc. 1857.
150. *Wilbraham (Rich.)* — Travels in the Transcaucasian Provinces of Russia. London, 1839.

ԵՐԱԿ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐԱՅՈՑ

ՀԱՅԱՔԵԱՅ

Հ. ՂԵՒՈՆԴ Կ. Մ. ԱԼԻՇԱՆ

Թերևս ոմանց նորորինակ բան մ' երևայ՝ Հայոց աշխարհիս փոքր մասի մը

մանրախոյզ տեղագրութեան հրատարակումն, այս ժամանակիս մէջ, յո.

րում՝ ըստ այլ և այլ տեսութեանց, շատ խօսք և փափրոտքք և նաև խորհրդազական լուսութիւններ անոր վրայոյց ի վրէլուին։ անոր համար կը վարկեմ իմա՝ ցընելու, որ ես շատ տարիներէ 'ի վեր ձեռք զարկած էի Հայաստանի ընդարձակ աշխարհագրութեան, և երկար ժամանակ դադրած, ապա նորէն ձեռք առած, ստէպ հարցումն և թախանձանք ումանց բանասիրաց, և մանաւանդ թէ հրաման վեհագոյն, ստիպեց հրատարակել այս գործոյս ճաշակ մը միայն ընտրուեցաւ ՇիրԱլ Այրարատոյ դաւառն, իրեն բաղմակերպ նոր և հին յիշատակաց համար, միանգամայն կիսականգուն շինուածոց և արձանագրութեանց՝ ճոխագոյն մնացուածոց համար, որոնք առաւելապէս կը գտնուին հօս կենսակիր մեռած Անւոյ մէջ, որ իրեն կրկնակի կերպարանքն՝ ինն դարերէ 'ի վեր՝ Հայ երկրիս առաջին դէմքը կը հանդիպի զինքը նկատողաց։ Ուրուն և բարեբաղդաբար՝ կային պատրաստ ցուցող պատկերներ։

Այս բանիս համար թէպէտ և ջա

նացի քննել ամեն գրուած որ այս ստորագրելու տեղոյս վրայ կը խօսէին, որ, չափ և որչափի ձեռքս հասաւ, բայց ինչ որ ալ ըրի կամ պիտի ընեմ՝ չեմ կրնար վստահ կերպով գուրցել, ինչպէս քանի մը բաղդաւորագոյնք՝ մեր Պատմաց մէջէն ազնուագունին հետ (Եղիշէի), թէ « Ես ինքնին 'ի տեղոյն պատահեցի և տեսի »։ Ոչ. ես իսկապէս չտեսայ այն տեղերն, ուր կը հրուչակուին մարդկութեան առաջին տեսարանքն, և ուր, մեր առաջին պատմագիրներէն մէկն (Փարպեցին) կը վրկայէր, « բազմադիմի յեղափոխութիւնս » եղած։ որչափ աւելի անկից ետքը չորեքստասան բազմադիմով դաւրաց ընթացից մէջ՝ մինչև մեր օրերն։ — այլ ես հեռուէն և դրսէն 'ի ներս հայրենեաց մէջ կը պարտիմ, և կուրորէն կը նկարագրեմ լոյսն. անձամբ խոստովանելով, որ հանդերձ ամենայն ջանից և խուզարկութեանց, անհնար է դուրս եղողին ճշգրտագրել ըստ լրոց և ըստ գրոց². սակայն այս ալ կը բռնադատուիմ ըսելու, ոչ 'ի պարծանս


1 Որչափ որ արձանագրութիւններ գրուենմ՝ զամենք ալ կ'ուզեմ Տեղագրութեանս մէջ մտցնել, որուն նաև պատուականագոյն մասը կը համարիմ, վասն զի շինուածներէն աւելի անեղծ և անայլալի կը մնան. զատոնք ալ զգալի էր լուսատուութեամբ ճշգրտել, ինչպէս որ չեն նաև գրքիս մէջ ներկայացեալ իսկաձեքն. (զոր օրինակ 15. 16. 41 և այլն, պատկերաց թիւերն), այլ Քէսքներէն նմանաշինուած։ Անկէ առաջ Լոգոգէն տը Լավալ Փռանի՝ ուրիշ հին քաղաքաց հետ Անւոյ ալ և ուրիշ մեր երկրին քանի մը տեղեաց արձանագրութեանց ձեւն հանած էր, իրմէ հնարած թղթազանգ ձեւով և այլ չեմ գիտեր ինչ եղաւ և ուր մնաց, հանդերձ իրեն տեղագրութեամբ 'ի Մեծ և 'ի Փոքր Հայս։ Պրոսէ կ'ըսէ որ հրատարակած ըլլայ 50 արձանագրութեանց չափ՝ Քէսքներէն նմանահանուած. Պաւլաս ուսու օրագրի մէջ 1853 տարւոյ ('ի թիւս 18-21), զոր ես չեմ տեսած, բաց 'ի քանի որ հատերէն որ իրեն Աւերական Անոյ գրքին մէջ են։ Ի զանազան անձանց գաղափարակալք բաղդաւորով՝ ընտրել եմ ընթերցածները, բողոքովն անպիտօնիս պահելով մնական հանդերձ սխալներով, հազիւ տեղ տեղ կ'ետեր աւելցնելով իմաստներն որոշելու։ Այս մասուն կանն մէջ 300 արձանագրութիւնք հաւաքուած են. այլ է՛նչ բան է այդ Անի մայրաքաղաքին և

ամբողջ Շիրակայ համար։ Տեղագրութեանս իմաստը երկայն ստեղծ չընդհատուած համար. արձանագրութիւններէն շատը մանաւանդ խանգարածներն՝ գրի ինչ վարը, ծանօթութեան մէջ։ — Յանկափ վաւերականներ են նաև քաղաքաց կամ անոնց տեղանց գրամներն, այլ մինչև հիմա Անւոյ Երանշահից գրամ մ'ալ չայտնուեցաւ. իսկ Յունաց և այլազգեաց՝ պեղմանց մէջ շատ կը գտնուին. կարգին մէջ յիշած եմ (էջ 103) Ճէլայիբեանցը՝ նոյն իսկ Անի քաղաքին մէջ կտրուած։

2 Իւրեւմտ սխալոնք կը սարգին տեղեաց կամ գիւղից գրից կամ տարակալութեանց մէջ։ Չորեքստագան կողմունքը շատ անգամ կը նշանակեմ մէկ ստառով միայն, ինչպէս, Ել. — արեւելեան. Մ. — արեւմտեան. Հ. կամ Հս. — հիւսիս. Հր. — հարաւ։ Ընդհանրապէս հեռաւորութիւնք մընաւ. կը բացատրուին, որ աշխարհագրական է, կամ 1/60 աստիճանի, և 1854 Չ. իսկ այս Չ տառն կը նշանակէ Չափ, այսինքն Փռանկաց Մէրըն. ըստ այսմ նաև բարձրութիւնք տեղ տեղ Չափով, և տեղ տեղ օտնաւաճիւն կը նշանակուին. և Ողքը՝ բարիքեանն է, որ է 0,32484 մէկ Չափի, և փոխադրաբար՝ Չափն է 3 ոտք և 1/12 ոտքի։ Տեղ տեղ յիշուած փարսախն՝ է 2 1/2 մլոն։

անձին և զայս մեղադրելու համար, թէ ականատեսից այլ և այլ գրութիւնքը բաղդատելով, նաև անոնց մէջ շատ սխալներ գտայ: Նոյնն իմանայ իմ ողջախոհ ընթերցողս նաև պատմական գիպաց համար, մանաւանդ նոր պատերազմական պատահարաց, նոյն այս Շիրակայ գաւառիս մէջ հանդիպած. վասն զի ուրիշ բաներէն աւելի պատերազմաց և պատերազմողաց ղէպքերն շատ ուշ կը ստուգուին, թէ որ երբեք ստուգուին: Իմ փոյթս և իղձս

ճշմարտութիւն է. հաւաստրապէս պատուելով առաքինութիւնը և քաջութիւնը ուր և որ կողմն ալ տեսնուի, և հաւաստրապէս ցաւելով երկրիս այրածին և աւերածին վրայ, զոր անխտիր կը կոխէ և կը կոխտէ յաղթողին և յաղթուողին ոտքն. և կարծեմ թէ այս ղէպքին մէջ քաղցրուսոյց փրկչին մեղադրութեան տակ պիտի չընկնայ Հոյ մարդն, եթէ պիտի չկաքաւէ փողահարին հետ և պիտի չլայ ողբացողին հետ:



Ճաշակ ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԵԱԿՈՅ. — Արձանագիր Մանուէի ի բուրգ մի Պարսպին Անուոյ:

Տեսչալի էր ինծի, սակայն գործ դրածուարին, ամեն հին և արժանայիշատակ տեղեաց պատկերներն՝ ստորագրութեան կարգին համեմատ ներկայացրենք. և ահա որչափ որ կարողացանք՝ կ'երևին մատենկանս մէջ. յորում ինչպէս կը տեսնուի, ասոնց մեծ

մասը՝ ինչպէս նաև տեղադրութեան կը գրաւէ Անի, այն Շիրակայ կեդրոնն և կուրծքն. որուն վրայ, նաև պատշաճապէս՝ շատ գործք գտնուեցան, ինչպէս որ ես մի առ մի յիշած եմ թէ անոնց այցելութիւնը և թէ տեսութիւնը¹. Ըստ ժամանակին ամենէն վերջը

¹ Մտաւորական լուստապութիւն մը համարելով ականատեսից՝ տեղեաց ստորագրութիւնքը, երբեմն ամբողջ և երբեմն քաղուածոյ թարգմանութեամբ՝ տեղագրիս մէջ գրի, բնագիրներն ալ աւելցրենք. և այս, նախ՝ որպէս զի հեղինակաց միաքն ճշգրտագոյն կերպով ճանչցուին. և երկրորդ, վասն զի անոնց մատենաներէն շատերն դժուարագիւս ըլլալով՝ բանասիրաց աւելի հաճոյ կ'անցնին, այլ նաև անհայտ.

գէտ հետաքննից, որոց պատասխաններն ալ յարգոյ են: Ինչից վարը համառօտիւ նշանակուածներն՝ Անուոյ այցելուաց անուններն և գործերն՝ հոս ալ պիտի գնեմ, որոց առաջինն է մեր համագիր.

BEDIG PETR. — Cehil-Sutun. (Historiæ Persarum). 1678. Vienn.

TAVERNIER J. B. — Les six Voyages. 1676. Paris, 3 vol.

դնելով՝ այն ազգայինը, որուն աշխատութիւնն ինծի շատերէն գեր 'ի վերոյ կ'երևայ. լուսազրոյ Քիւրքճեան Յովհաննիսին համար կ'ըսեմ. ուսկից ես

ալ կրնայի օգտուիլ և ճշգրտագոյն կերպով աւանդել քաղաքին շինուածոց կամ աւերակաց տեսին. այլ որովհետև ոչ ծանօթացայ անոր, կ'ուշանար նաև,



Ճաշակ ՏԵՂԱԳՐԱԹԵԱՆ ՇԻՐԱԿԱՆ. — Դեղանկար պատկերի Մարկոսյանի:

Թղթակցութիւնն, և արդէն այս պատկերներէն մեծ մասը փայտի կամ ուրիշ նիւթի վրայ գրուած էր, այս

պատեհէ օգուտ չկրցայ քաղել. և ուսագրութեան օժանդակութենէն առաջ, արձանագրութեանց և ընդօրինակողաց

TOURNEFORT (PITON DE) — Relation d'un Voyage du Levant 1717. Lyon, 3 vol.

GEMELLI-CARERI — Giro del Mondo. 1693-8. Napoli, 6 vol.

KER PORTER — Travels in Georgia, Persia, Armenia, ancient Babilonia, etc. 1822. London, 2 vol.

WILBRAHAM — Transcaucasian Provinces of Russia. 1834, London.

ABBOT KEITH — Notes of a Tour in Armenia in 1837, (xii Vol. Journal of the R. Geographical Society. London).

BORÉ EUGÈNE — Aspect des Ruines d'Ani.

(Mémoire dans le Correspondant, Revue mensuel, Tome I." p. 288). 1843.

HAMILTON W. — Researches in Asia Minor, Pontus, Armenia, etc. 1842. London.

KOCH KARL — Reise durch Russland nach dem Kaukasischen Isthmus in den Jahren 1836-8. 1842. Stuttgart, 2 vol.

CREAGE J. — Armenians, Koords, and Turks. 1880, London, 2 vol.

FONTON (FÉLIX DE) — La Russie dans l'Asie Mineure. 1840, Paris.

TEXIER CHARLES — Description de l'Arménie, la Perse, et la Mésopotamie. 1843, Paris. 3 vol. in f.°

մէջէն՝ միայն աչաց զննութեամբ, ամենէն աւելի վերագոյն գտնուեցաւ իմ կրօնակիցս, հանգուցեալ Հ. Ներսէս վ. Սարգիսեան, որուն Տեղագրութիւնն փոքր և Մեծ Հայոց մէջ՝ շատոնց հրատարակուած է. և ես այս իմ իբրև յիշատակ անոր երախտեաց նուիրեցի։ Լուսանկար արուեստէ՝ միայն Մարմաշինի, Ալեքսանդրապոլի և Հառիճայի եկեղեցեաց պատկերներն հօս մտան. առաջին երկուքն (թիւ 68 և 80) փերքճեանին են, երրորդն (թ. 74) չեմ գիտեր ում է. ուրիշ ամեն պատկերներն ընտրուեցան, ոմանք Ապիխայ Գերմանացւոյն գծագրութիւններէն, և շատերն՝ ի գրոց Պրոսէի (Աւերակաց Անույ), զորս ինքն առած է Յուլիոսի ֆէսդնէրի ընդօրինակութիւններէն։

Ասոր և իրեն որդէսն Պետրոսի՝ ուրիշ շատ անտիպ գծագիր տեսներսն ալ կային, երեք պրակի մէջ հաւաքուած և Պետրպուրկի կայսերական ճեմարանին թանգարանին մէջ պահուած. որոյ տեսուչքն հաւանեցան ազնուապէս երկու անգամ զրկել զանոնք և թողուլ ընդօրինակելու. անոր համար և հօս կը յայտնեմ անոնց խոնարհ շնորհակալութիւն, ինչպէս նաև գովութիւն՝ ընդօրինակողաց յայդ ջանիցն, Մուրատ-Ռափայէլեան վարժարանին սաներուն։ Աւելի քաղցրագոյն է ինծի ասոնց հետ իմացընել, որ գործոյս ուրիշ ամեն պատրաստութիւնքն՝ այլոց եղբարց և Ռախտիս Հօրն արդիւնք են. որոց այս բանիս խնամքն՝ քան զիմա աւելի և զաւ, և փափագելի էր աւելի վայելչագոյն ընել, հայրենեաց սիրոյն և հաճութեան համար. և ոչ թէ լաւագունի տգիտութիւնն սահմանեց այս չափը, այլ ծախուց ծանրութիւնը, որուն գըրսէն մէկը չօգնեց, բայց ի միոյն, որուն անունը Շիրակայ Տեղացոյց տախտակն կը ցուցընէ. (որ օտարագրէի վիմագրողի առաջին փորձն ըլլալով, արգահատելի ըլլայ քանի մը թերութեանց համար)։ Ասկէ յայտնի է՝ որ առանց զօրաւոր օգնութեան կարելի չէ ի գլուխ հանել այսպիսի տեղագրութիւն բոլոր


մեծ աշխարհի մը՝ ինչպէս որ Հայաստանն է. և մեր աղգայնոց պարծանք կը համարիմ որչափ որ ձեռքերնէն կուգայ օգնականութիւնը, թէ որ այս ճաշակով գործն հաճոյ անցնի։

Բայց երբ պիտի լմնայ այն. կը հարցընեն ինծի բանասէրք. — որոնք, վասն զի ոչ զիս կ'ուզեմ խաբել և ոչ զայլս, խորենացւոյն ըսածը կը պատասխանեմ, (Ա. է.) « Առաջիկայս մեր երկար է գործ, և ժամանակ մահկանացուաց՝ սուղ և անյայտ »։ մանաւանդ անոր ուրուն ծերացած հասակը մօտագոյնս կը նշմարէ այս աշխարհիս ոլորտը։ Այլ մինչև յոր սահման ալ ձգուի այն ժամանակն՝ կը յուսամ որ երկասիրութիւնն ալ առաջ պիտի երթայ, որչափ կարողութիւն է և պատեհ. եթէ կենաց և ամենայն բարեաց Տուտըն ի կատար հասցընէ, գոհութիւն իրեն. և թէ որ ըսէ՝ Մինչև այդ տեղն, ինծմէ կրկին գոհութիւն. իսկ յայլոց՝ կատարման գործոյն յոյսն, որ ձեռքով որ ըլլայ. զոր զօրացընեն ժամանակիս աշխարհագրական գիտութեանց բարգաւաճանքն ալ, և մեր աղգայնոց հետազոտութիւնքն իրենց աշխարհին այլևայլ կողմերը, և լուսատիպ նմանահանութիւնք. կարելի էր թերևս ըստ փափագանաց ոմանց մաս մաս կամ առանձին առանձին հրատարակել, (ինչպէս այս Շիրակայ դաւառն)։ այլ ատով, համառօտ ըսելով, գործը կոտորուած կ'ըլլայ և ոչ կատարած. և կարելի չէ պահել ոճոյ միութիւն, զոր կը փոփոխէ մատենագիրն, և նիւթոյն բովանդակելէն ետքը՝ կը հարթէ կը յարգարէ. թող որ նաև միշտ պէտք կ'ըլլայ պատկերաց և քարտից պատրաստութիւն, և հրատարակման նախապատրաստ հայկհայկիւն։ Աւելի վայելուչ է ինծի տեսնել յորդախողաց գետոյ իսկաճեմ գնացըը, քան թէ առու առու բաժնելով խոտորեցընէլ զայն ուր որ հանդիպի։

Այս ալ կ'ուզեմ յիշեցընել, (որուն իրենք իրենց ալ խեղամուտ կ'ըլլան մեր աշխարհին պատմութեան հմուտեղողք) որ միայն Մեծ Հայք 200 գաւառ ու-

նենալով, եթէ ամենքն Շիրակայ պէս
երկարօրէն անզագրուէին, գործը ան-
հնարին կերպով կը ստուարանար և կը
ծանրանար, այլ ստուգիւ գրեթէ այդ

գաւառներէն երրորդ մասն՝ քիչ ժամա-
նակ Հայոց սեփականութիւն ըլլալով,
ոչինչ կամ հազիւ քանի մ' ազգային
յիշատակ ունին, անոնցմէ շատեր ալ




Մանգուկ Եկայրդիմի Բաշի ՂիօրՏ — ԵՐԱՅԱՆ ԵՐԱՅԱՆ ԿՈՒՆՔ

կան՝ որ մինչև հիմա անծանօթ և ան-
մատոյց մնացած են, տմարդի անմատ-
չեի մարդիկներէ գրաւեալք. սակայն
և ՚ի հակառակէն, քիչ մը ճանչուած

ներն ալ, և նոյն իսկ Շիրակս, եթէ ա-
ւելի մանրամասնաբար քննուին ՚ի
գիտնոց, արդեօք քանի երկարագոյն
խօսից հասուածներ պիտի չի պահան-

ջեն, և ինչպիսի տեսարաններ յերևան
պիտի չհանեն, թէ ցանկալի բլլան թէ
ցաւալի: Այնչափ յոյս չկայ սիրտլի
չէնքեր գտնելու, որչափ քանաւու
թիւնու աւերակացո, ինչպէս որ կը հա-

ռալէ վաճան Գողթնային. և յիրաւի
հիմայ Հայաստան աւելի աւերադրու
թեան քան աշխարհագրութեան կը
պարտաւորի. սակայն նախնեաց ամե
նայն դաստակերտքը հիմնայատակ և



Ճարակ Երևանի քաղաքը Երևան. — Ալեքսանդր Կարապետ

հետախաղաղ եղած չեն, կամ դերը
կաց փլատակներու տակ յժածկուած.
կը գտնուին աւելի կամ նուազ կան
գուն և կիսականգուն շէնքեր, մեր հար
ցըն հանճարոյ, հաւատոյ, ճարտարու-

թեան և մեծադործութեան անձայն
քարոզներ, սրբազան աւանդներ, զոր
մեզի ներկայիցս պարտք են պաշտել և
պահել զգուշութեամբ, և իբրև հայրե
նասուր անդրժեւի ժառանգութիւն՝

փոխանցել յետագայից . անոր համար նաև որչափ կարելի է՝ ապահովցընել նշխարներն ժամանակին ժանիքներէն և անզգայ աւերածուններէն . նորոգել և հաստատել վտանգեալքը և կործանման մերձաւորագոյնքը . և որոնք որ անհնարին են՝ ի հաստատել գէթ լուստտիպ նմանահանութեամբ անմուաց ընել . և մի անփոյթ և դանդաղ ըլլալ այս բանին . վասն զի ինչպէս անդադար է ժամանակն , այսպէս նաև իրեն օրէնքն սպառիչ , որ գրեթէ ըստ հին առասպելին՝ օրէ օր կը կլլէ այն քարերէն մաս մը՝ որոնք կոփուած են մեր հարց քրտամբքն և արեամբք և շատ արտասուօքոտագուած : Ահա գրքիս տպագրութեան ժամանակն , մինչդեռ Անույ մը՝ նացորդաց մէջ քան զամենն աւելի կանդուն և բարձրականգուն կը նկատէի և կը գրէի միջակառոյց աշտարակը , որ շատ փարսախներով հեռուէն անցորդաց աչքը իրեն կը ձգէր , և ամբողջ ութ դար կը դիտէր իր չորս կողմի եղածն , այնքան հարուածոց բնութեան և բռնութեան զիմակալութենէն ետքը , հոգմեահար տապալած տարածուած է (տարւոյս 6—18 փետրուարի) , հինն ըուն վրայ նոր աւերակ յաւերակս . և պակսեցաւ Անույ և բոլոր Հայոց աշխարհիս նշանաւորագոյն յիշատականոցիսէն մէկն : Բանաւոր կամ գրուոր յիշատակարանաց կորստեան կամ նուազութեան ժամանակ , այդ աւերակներն մեր ազգին լռախօսիկ պատ-

մութիւնքն են , շատ անգամ ճոխագոյնք և միշտ ստուգագոյնք վիպասանից զըրուածներէն աւելի . . .

Բայց ինձի միանգամայն աւերակ և չէնք կ'աղօտանան՝ աւագ հայեցողութեամբ : Կարևոր խոստովանութիւն մ'ունիմ , գուցէ ուրիշ տեղ ալ յայտնած . վասն զի աշխատութեանս բուն ներքին նպատակն՝ ընդունայն և միայն երկրաւոր կամ հեթանոս կամ հելլենացի հայրենասիրութիւն և հայրենագիտութիւն չէ . այլ զայն հզօր օժանդակ մը կը համարիմ ազնուախոտ մը՝ տաց՝ քան զերկիրս ի վեր թռչելու . ոչ միայն ինձի՝ ըստ իմ վիճակիս՝ պատշաճաւոր , այլ և ամեն յոյս ունեցողներուն ի լաւագոյն հանդերձեալսն . « Բոնե երկինք և քոչ երկիր , սլ Տէր . ըզհիւսիս և զհարաւ դու արարեր » . կը գոչէ աստուածահաճոյ Մարգարէն . իսկ ինքն Աստուած՝ անոր բերնով գոչաւորագոյն կ'ազդէ . « Երկինք աթոռ իմ են , և երկիր՝ պատուանդան ոտից իմոց » : Այդ պատուանդանիդ մէկ մասը կը ճանչնամ ես նաև մեր հայրենի աշխարհն Հայաստան . կը սիրեմ համբուրել հօս առաջին ոսնատեղին . այլ փութով անկէ գէպ ի վեր նկատելով՝ աւոր աթոռոյն վրայ կը փնտռեմ իմ հանդիստս . կը փափագեմ որ նաև իմ համակիր հայրենակիցքս յայն թեալ կոխեն . յոյն անկասկած և համաշխարհական հայրենեաց հայրենիքը , երանաւետ սիրաւետ Աստուած աստանն :

ԱՇԽԱՐՀԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՅԱՐԱՅԻՐՈՒԹԵԱՄԲ

ՎԵՆԵՏԻԱԶԱՅ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՆ

Թերևս , եթէ ոչ յանդուգն , նորանշան բան մը համարուի , որ այնքան մեծամեծ և մեծապանծ ազգաց , տէրութեանց և ընկերութեանց մէջ , որոնք ազնուութեան և հանճարոյ փոխադարձ մրցանօք կը ներկայացընեն իրենց աշխարհագրական գիտութեանց գանձը՝ այս ազնուական և արժանաւոր վէննետիկ քաղաքիս մէջ , մտնէ

նաև այն ազգն կամ երկիրն , որ իրեն վաղեմի ազնուականութեամբն հանդերձ , հիմայ Ասիոյ նախնի ժողովրդոց տխուր նըշխարաց մէջ կը խառնուի . որոնք ի սկզբան ժամանակաց բռնած էին այն կեդրոնատեղին , յորմէ կը ծաւալէր աշխարհի վարչութեան շարժիչ զօրութիւնն , մինչդեռ այսօրուան արթուն զուարթունն լու-